

Մարզպետն այցելեց Աշտարակի տարածաշրջանի համայնքներ

Մայիսի 2-ին մարզպետ Գաբրիել Գյոզալյանը այցելեց Աշտարակի տարածաշրջանի մի քանի համայնք եւ ծանոթացավ հիմնախնդիրներին: Մարզպետը եղավ Ուջանում, Կոշում, Արուճում, Շամիրամում եւ Ագարակում: Համայնքապետերի եւ բնակիչների հետ հանդիպումների ընթացքում քննարկվեցին առկա առաջնահերթ լուծում պահանջող խնդիրները, որոնց լուծումը կնպաստի համայնքների զարգացմանը: Մասնավորապես առանձնացվեցին համայնքային ճանապահների, կրթական եւ մշակութային օջախների վերանորոգման մի շարք այլ հարցեր, համատեղ քննարկումների արդյունքում մշակվեցին դրանց լուծման հնարավորությունները: